7. ԹՈՒՐ Ի ԹԱՄ ԹԱԳԱՎՈՐԻ ՀԵՔԻԱԹ

Կէղնի թագաւոր մը, ուրեն ավլատ ու թավլատ չէղնի։ Օր մը ավ ու խուշի ելած ատեն, աղրրի վրա մը նստուկ կէղնի ու ջուր խմե, գլուխ կվերցու վի, կտեսնա օր էնգիեն դերվիշ մը կիգա։ Երբ կհասնի ուր մոտ.—Բարև քի, թագավոր ապրած,— կըսե ու կնստի։ Կզարմանա թագավոր ու ինքն իրեն կասե. «Էդա մարդ համբորդ մարդ, ի՞նչ դիներ օր ես թագավոր իմ, էկավ ասաց՝ բարև քի, թագավոր ապրած ու նստավ»։

Դերվիշ երբ տեսավ թագավորի տակնուվրա էղնելը, վերուց ասաց.— Թագավոր ապրած, դու հոգ մ՝ուտի, ես գինամ օր դու թագավոր իս ու քզիկ ավլատ ու թավլատ չկա։

Կհանե ճեբեն խնձոր մը կիտա թագավորին, կըսե.— Տար քեղվե, քեղրները տուր քու ձիուն ուտե, խնձորի կեսը դուն կուտիս, կես լե քու կնկան կիտաս ուտե, աստուծով տարին թմի՝ քզիկ տղե մը կէղնի, քու ձիուն քուռակ մը, պլե անուններ չդնիք, հար ես հ՝իգամ։

Թագավորը դերվիշի ըսածի պես կէնե, աստծու հրամանով ինն ամիս, ինն օր, ինն սահաթ կթմի, չթմի՝ թագավորի կնիկ ցավ կկանի, բերե տղե մը, ձին լե՝ քուռակ։ Մեկ երկու ամիս կընցնի, երբ կտեսնան օր դերվիշ հ՝անդրցավ, չէկավ, բետաբետ մարդիկ կըսեն թագավորին.— Թագավորի տղեն առանց անվան չէղնի, էկեք ժողվինք, անուն մը դնենք։

Էդ խոսքի մեջ կէղնին, մեկ լե կտեսնան օր դերվիշը բացեց դուռը, մտավ ներս և բարև տվավ, մեկ կողմ նստավ չնստավ, վերուց թագավորին ասաց.—Չէ՞ ես քզիկ ասի, զտղի անուն չդնիք հար ես հ՝իգամ, էդ ի՞նչ է կէնեք։

Թագավորն ասաց.— Տեսա օր դու հ՝անգցար, ասին գայիր չի գա, քետաքետներ ժողվեր են, օր անուն մը դնեն։

— Աղեկ չեք էրի, բայց բարին աստծուց, քու տղի անուն ուր հետն է, Թուր Ի Թամ է, քուկու անուն լե՝ Հրեղեն։

Նստողներ կզարմանան էդ անվան վրեն, կվերցուն կասեն դերվիշին.—Դերվիշ բաբա, հեչ մարդու անուն Թուր Ի Թամ կէղնի՞, ուրիշ անուն մը դիր։

Դերվիշ կասե.—Ձեք գինա էնդոր անուն հ՝ո՞րի Թուր Ի Թամ դրեր իմ, էնի ուր մորնե էղած ատեն, վրեն Թուր մը կա, Թամք լե ուրնե է, էնդոր հոգին էն Թրի մեջն է, եթե զէն Թուր չգողնան, էնդոր մահ չկա, ու ինք լե ինչքան մեծնա՝ ուր Թուր ուր հետ կմեծնա, էնդոր համար Թուր Ի Թամ դրեր ին զանուն։

Հախիխաթ կէրթան տեսնան օր Թուր մը կա տղի վրեն, Թամք լե հ՝ուրնե է։

Դերվիշ կթողու, կէրթա. տղեն լե օր քընց զօր կմեծնա, աստծու աչքն էղնի ուր վրեն։

Տղեն տաս-տանրհինգ տարեկան կէղնի, չէղնի, կէղնի ահագին ծառ մը, ուրեն ազբրգեր մը լե կեր անուն Սինանջահ էր։ Օր մը էրկուք մեկտեղ հոլ խաղցած ատեն, Թուր Ի Թամ կզարկե մողտեն, կէրթա պառվու մը քթոց կկոտրի ու կաթ լե կթափի, պառավ կհերսոտի, բայց կըսե.— Թուր Ի Թամ, դու մեկիկ իս, բերանս չբռնե օր անիծեմ զքզիկ, բան օր կասեմ՝ Օսկիծամի սեր մաշիս։

Թուր Ի Թամն է՝ Օսկիծամի անուն կլսե չլսե, քանի կէրթա, ետ կէրթա, ու օր քան զօր կհալի ու կմաշի, օր մը լե ինքնուրեն կասե. «էդ հըմլա չէղնի, ես պիտի էրթամ Օսկիծամի ետևեն»։

Կ՝իգա տուն, հոր ու մոր ձեռք կպագնե ու Թադարուկ կտեսնե օր հ՝ընկնի ճամբախ, հեր չթողե.—Լաո, ո՞ւր կէրթաս, ես Թագավոր մը եմ, ուրիշ ավլատ ու Թավլատ չունիմ, աղչկա քոք չկտրեր է, մանցիր ասքը-քրով, ես կէրթամ բերիմ Օսկիծամ, կամ էնի չէղավ, ուրիշ մը Թող էղնի։

Թուր Ի Թամ անկաճ չէնե հոր, կիշնի ախոռ, կտեսնա օր փակուկ դրան մը առջև Արապ մը կա կանուկ, մեկ մռութ երկինք է, մեկ՝ գետին։

— Արապ, ընծիկ ձի մը տուր, օր ամպերու հետ խազա։

Արապ կասե.— Ես քզիկ հըմալ ձի հ՝ուստե՞ն իտամ։

Ջափալախ մը կզարկե Արպուն, կէրթա գլուխ չքի խուշքու մեջ, կելնի կանի, կասե Թուր Ի Թամին.— Գլխուդ-արևուդ մեռնիմ, ընծիկ մը զարկի, քզիկ ձի մը իտամ օր հ՝երկնուց հավքերու հետ հուքմ էնե։

Դուռ մը կբանա, Թուր Ի Թամ կտեսնա օր քուռակ մը կա կապուկ էնտեխ, ուր քես ու քիսպաթ լեզվող Թարիֆ չէղնի, քանի օր աշխարք քար քարի վրա դրվեր էր, հըմալ պետվական հայվան չըր էղի։ Կէրթա

ներս, փաթ մը կօլորտի ձիու բոլոր, վերշ ձեռք կդնե ձիու պառեկին, կշխտե, կտեսնա օր քուռակ էրկու թիզ չուր պառեկ վի բանձրցուց. երբ որ կթորկե, աստծու հրամանով քուռակ լեզու կելնի ու կասե Թուր Ի Թամին.— Իրեք բան լե մնաց, թե օր կատարես, ես քումն իմ, դու լե իմն իս։

Թուր Ի Թամ դրեց դուռ ու ելավ դուրս, Արպուն լե ասաց.— Դու զդուռ կփակիս, հար ես դառնամ իդամ. վայ քզիկ՝ իմ քուռկուն մատ իտաս, քու գլուխ կէրթա։

Արապ վախնելուն լփլփալով ասաց.— Թուր Ի Թամ, գլխուդ ու արևուդ մեռնիմ, զաթի զէդ քզիկ համար իմ պահի։

Թուր Ի Թամ դարձավ տուն, մամու ձեռք պագեց, հալալաշմիշ էդավ.— Մերիկ, քու ծծի կաթ հալալ էրե, ես կէրթամ իմ մուրատի ետև,— ու թռավ դուս։

Մեր ինչ լեզու գործածեց, անկարելի էղավ.— Լաո, քու պապ հալվորցեր է, ավլատ ու թավլատ չունի, էդա թախթ ու սանտանաթ վի՞ր կթողիս էրթաս։

Անկարելի էղավ. լցեց հակյուպե մը ոսկի, մոր ձեռք անգամ լե պագեց, թավլից դուրս քաշեց զուր քուռակ, զօձվենի թամք զարկեց վրեն, կանչեց զուր աստված ու զօտք դրեց ղանկուն չդրեց, մեկ լե քուռակ լեզու էլավ, ասաց.—Տե՛ս, Թուր Ի Թամ, զքզիկ կհանեմ արևու առջև, հանտե կիրիցեմ,— ու բանձրացավ էլավ երկինք, օր վառեր։

Տղեն քուռկու փորու տակ, հրեղեն ասաց Թուր Ի Թամին.— Կիշնիս իմ վրանեն, թե չէ զքզիկ հրմկա կիջում անդունդ։

Տղեն ուշիկ մը ելավ վեր պառեկին, երեք անգամ ելնելուց ու իջնելուց վերջ, երբ ձին տեսավ օր տղեն ուրնե ավելի հունարով է, իջավ գետին ու ասաց Թուր Ի Թամին.—Թուր Ի Թամ, հ՚օրես բաց դու իմն հա, ես լե քումն իմ,— ու քշեց թագավորի սարի դուռ, պագեց պապու ձեռք, բարեմնաց էղավ ու հ՚ընկան ճամբախ։

Շատ գնաց, քիչ գնաց՝ աստված գինա, աղբրի մը ռաստ էկավ, իջավ ձիուց, լվացվավ, քիչ մը ջուր խմեց, հակյուպեն բացեց օր բրդուճ մը հաց ուտեր, տեսավ էնդիեն ձիավոր մը քյասկե ղանկուն ուր դին կիգեր։ Հասավ ուր մոտ, բարև տվեց, իջավ ձիուց ու աղբրի վրեն նստավ, իրարու հետ կերան խմեցին, երբ ելան զուրանց ձիանք կհեծնեն, Թուր Ի Թամ հարցուց ճամբորդից.—Աղբեր, դու ինչ մարդ իս, հ՚ուր կէրթաս։

Մարդն ասաց.— Ես լե քու պես ճամբորդ մը եմ, զուրպաթ կէրթամ։

Եղան ընկեր ու հ՚ընկան ճամբախ, թե օր մը, թե էրկու՝ քշեցին զուրանց ձիանք, նորեն չայիր-չիման տեղ մը աղբրի մը ռաստ էկան, իջան ձիանուց, թողեցին օր քիչ մը հանգստանան, իրենք լե աղբրի վրեն նըստան, օր բրդուճ մը հաց ուտեն։ Մեկ լե տեսան օր էնդիեն ձիավոր մը

ուրանց դին կիդա։ Հասավ մոտ ուրանց, իջավ ձիուց, բարև տվավ ու աղրրի վրեն նստավ, կերան խմեցին, երբ ելան կէրթեն, Թուր Ի Թամ հարցուց.— Դու ի՞նչ մարդ ես, աղբեր, հ՞ու՞ր կէրթաս։

Էն լե ասաց.— Ես լե ձըր տեսակ ճամբորդ մարդ իմ, ղուրպաթ կէրթամ։

Ու Լղան երեք ընկեր։

Թուր Ի Թամ վերուց ասաց.— Աղբրտանք, մենք էղանք երեք ընկեր ու իրարու հետ ճամբախ կէրթանք. անայիպ եթե փորձանք մը մըր վրեն գա, դուք ի՞նչ հունար ունիք, ասեք, որ ես լե ասեմ զիմ հունար։

Մեկն ասաց.— Ես տաղլաճի իմ, ինչ որ ընկնի ծովու մեջ՝ կիջնեմ հանեմ։

Մեկելն էլ ասաց.— Ես ռամլետար իմ, ինչ բանի վրա որ ձեռքս երկնցում՝ կհանեմ։

Ու ռամլետար ու տաղլաճին ասին.— Հըմալե, դու մըզիկ մեծ աղբեր, մենք քզիկ պզտիկ աղբեր, ինչ որ հրաման էնիս՝ մըր դլխուն ու վըր մըր աչքերուն։

Թուր Ի Թամ ասաց.— Աղբրտանք, աղբրութեն խոսքով չէղնի, թե որ հըմալ է, բերեք մըր մատնեբուց արուն հանենք, խմենք, հանդե կէղնենք իրարու հալալ աղբեր ու մըր սիրտ իրարու վրա կցավա։

Խանեցին ուրանց մատներուց մեկ-մեկ կաթ արուն, խառնեցին իրար, խմեցին ու ընկան ճամբախ։

Շատ գացին, քիչ գացին, ռաստ էկան հողի մը. հող սև, քար սև, փայտ սև։ Բռնեցին ճամբախ ու գացին, հեռուեն տեսան որ ծուխ մը կելներ. գացին ռաստ էկան քեռշկի մը։ Երբ հասան քեռշկի դուռ, տեսան որ աղջիկ մը զգլուխ հանեց փանչարից դուրս ու ասաց.— Կտրիճներ. հավք ուր թևոք, օձ ուր պորտոք դետավեր օղրամիշ չէղնի, դուք իմա՞լ իք էկի. ղուրպան էղնիմ ձըր գլխուն ու արևուն, հըմկա հինգ գլխեն տև որ էկավ, ձըր մենծ կտոր անկաճ կթողե։

Թուր Ի Թամ ասաց աղջկան.— Ի՞նչ քու հոգին կէղնի, հըմալ կէնիս որ կտոր մը հաց չտաս ուտինք. տուր կտոր մը հաց ուտինք, չէղավ՝ հ՞ոդա չենք մնա, կէրթանք մըր ճամբու հետ։

Աղջիկն ասաց.— Ես ձզիկ կցավամ, եկեք հաց լե կերեք, ջուր լե խմեք։

Բացեց քեռշկի դուռ, Թուր Ի Թամ ու իր ընկերներ իջան ձիաննուց, ձիաննին քաշեցին ներս, ելան վի, աղջիկն որ տեսան՝ յոթ տեղով խոնջընեն կտրավ։ Երբ կերան-խմեցին, աղջիկ մեկ լե ասաց.—Մեռնիմ ձըր արևուն, ելեք գացեք, հըմկա էդ անիծուկ տև կիգա, զձզիկ հազար կտոր կէնե։

Երբ ելան քաշեցին զուրանց ձիանք, կհեծնեն, աղջիկն ասաց.— Էդա

Համբու հետ չէրթաք, հինգ գըլխեն խափշիկ հընտե էդա ճամբով կիգա. ձզիկ ռաստ իգա՝ հումուլում կուտե։

Ուրիշ ճամբե մը ցուցուց, ըսավ.— Էդա ճամբով գացեք, հընտե ձզի չպատահի։

Թուր Ի Թամ ասաց.— Մզիկ ի՞նչ գործ կա տևի հետ,— ու բռնեցին աղչկա ցուցուցած ճամբախ ու գացին։

Երբ քիչ մը հեռեցան քեռշկից, Թուր Ի Թամ ասաց ուր ընկերներուն.— Աղբրտանք, ես ղուրպաթ ելեր իմ օր անուն հանեմ, ղուրպաթ չըմ հելեր ի օր էրթամ մշկութեն էնիմ, փարա վաստկիմ. ես կէրթամ հինգ գլխեն տևի առշև։

Աղբրտանք ասին.— Մենք ճամբորդ ենք, մըր ճամբու հետ կէրթանք, ի՞նչ գործ տևի հետ։

Ինչ էրին չկրցան, զէնոնք ձորու մը մեջ պատվըտցուց ու ինք քշեց տևի առշև ու ճամբու վրեն կանավ, տեսավ օր հինգ գլխեն տև ձեթխցի մը գերան ծառ դրեր է վըր փեճին, ամեկ ճղեն մեկ մեկ ճանավար կախ ու կիգա։ Հեռուանց երբ տեսավ զԹուր Ի Թամ, պոռաց.—Է՛յ, աստվորի որդի, դու ի՞նչ կէնիս էդա տեղրանք, յոթ տարի է մարդու միս չըմ կերերի, ակռես կցավա, հըմկա զճանճ մը պոկս կառնեմ կըլում զքզիկ։

Թուր Ի Թամն էլ ասաց.— Չորաներ, չորաներ բերան տևին, չկամեներ մահն կտրիճին,— խոսք դեռ բերան էր, տև զծառ մարմնդեց ու հատ մը էկավ Թուր Ի Թամն, թոզ ու տյուման էլավ հ՝երկինք, եթե տղեն զինք մեկ կողմ չնետեր՝ հազար կտոր կէղներ.— Թո՛ւ, հում կաթ ուտողին իթիպար չկա,— ասաց տև,— լոդմե մը չի մնաց դնեի վըր ակռիս։

Խոսք դրռ բերան էր, Թուր Ի Թամ ասաց.— Կի, նոր գոհացիր, հոգեկորուկ,— ու Թուր մը թալեց, հինգ գլուխ լե պերտան հ՝ընկան գետին, կտրեց զտաս անկաճ, բերեց թալեց տաղլաճի աղբոր ճեպ ու դարձան էկան քեռշկ, զարկեցին զդուռ։

Աղչիկ զգլուխ հանեց դուրս, տեսավ օր իրեք աղբրտանք ին, ասաց.— Մեռնիմ ձըր գլխուն ու արևուն, ձզիկ չըսի՞ թը հըմկա տև կիգա զձզիկ հումուլում կուտե. հ՝որի՞ էկաք։

Թուր Ի Թամ ներքևեն պոռաց, ասաց.— Քու չան թըղ սաղ մնա, իմ աղբեր զտևի գլուխ շան պես կտրեց, տաս անկաճ լե լըցուկ է ճեպ։

Ելան վերին դին, հանեց զտաս անկաճ, լցեց աղչկա առշև, աղչիկ երբ օր տեսավ զէդի, ուրախութենեն էլ ուր շապիկ չըր կաներ, հ՝որեն օր տևի ձեռքեն էր կազատին զինք։ Կերան խմեցին, առավոտուն օր ելան կէրթեն, Թուր Ի Թամ ասաց ազչկան.— Իմ աղբեր քանի օր սպաներ է տև, զքզի կուզեմ իմ աղբոր։

— Աստված օր կամեցեր է, ես ի՞նչ պիտի ասեմ,— ասեց աղչիկ,— թըղ էղնի։

Թուր Ի Թամ զէնոնք հասուց ուրանց մուրատին ու ելավ, ընկավ ճամբան։ Երբ ճամբան ելավ, տաղլաճի աղբերն ասաց.— Աղբրտանք, դուք կէրթաք, ընծիկ նշան մը չավիք, երբ օր նեղության մեջ էղնիք՝ հ՚իդամ հասնեմ ձդիկ։

Թուր Ի Թամ վերուց ասաց.— Երբ օր խահվէ խմելու կէղնիս ու խահվեն արուն կդառնա, գիտցիր օր ես շատ նեղության մեջ եմ. հա՛, օր հասնես։

Բարեմնաց էղան իրարուց, տաղլաճի աղբերն ու իր նշանլուն դարձան քեռշկ, Թուր Ի Թամն ու ռամլետար աղբերն հ՚ընկան ճամբան։

Շատ գացին, քիչ գացին, հող ու ջրի մը ռաստ էկան. հող կարմիր, ջուր կարմիր, քար կարմիր, փայտ կարմիր։ Թուր Ի Թամ ասաց ռամլետար աղբոր.— Դինաս, էդա լե հինգ գլուխ տևի սղբոր հողն է, հրմկա դուր աղբոր սպանելը հասկցեր է, մրր վրեն տյուշմներ է. եթե հ՚ընկնենք ուր ձեռք՝ հումուլում կուտե զմղիկ։

Հեռուանց տեսան օր բարակ ծուխ մը կելներ, ասաց.— էդա լե էնդոր քեռշկի ծուխն է։

Բռնեցին գէդ ծուխն ու գացին. գացին քեռշկի մը դուռ կանան, քեռշկի տեր ու տուն ավիրի, խոմ քեռշկ ու սարայ չէր, դրախտի պաղ ու պախչեն, աշխարքի մալ ու թամալ օր կըսեն՝ հոդ էր լըցուկ. դու մ՚ասեր օր աղջիկ մը լե էդ քեռշկի մեջ կար։ Երբ կլսե ձիու օտներու ձեն, գլուխ փանչարից դուրս կհանե, կտեսնա օր էրկու ձիավոր էկեր ին իշի քեռշկի դուռ, կվերու կասե էնոնց.—Հողածին, դուք ի՞նչ մարդ իք, ի՞նչ բան ունեք էդա դին. հրմկա յոթ գըլխեն տև օր էկավ, զձեր յավա կտոր անկաճ կթողե. ղաղբեր սպաներ ին, ճեկար լե յարալի, դուք գինաք, ես կասեմ, զիմ մեղք իմ վղեն կհանեմ։

— Ի՞նչ կվախենաս,— ասաց Թուր Ի Թամ աղջկան,— հրմալ կէնեա օր փրդուճ մը հաց չիտա՞ս, ուտենք։

— Ջանըմ, ես հացի դարտ չիմ, ձեր դարտն իմ,— ասաց աղջիկ ու իշտապ-իշտապ քիչ մը հաց բերեց, կերան, ուրանց ձիաներ դարմնեցին ու ելան հ՚ընկան ճամբան։

Երբ բարեմնաց էղան ու քաշեցին ուրանց ձիերը, կէրթեն, աղջիկն վերուց ասաց.— Մեռնիմ ձըր գլխուն ու արևուն, յոթ տևի էրթացած ճամբով չէրթաք, ռաստ կիգա ձգիկ, կփըռըթե իրարուց։

Ուրիշ ճամբան մը ցուցուց. երբոր քիչ մը հեռեցան քեռշկից, ու քեռշկ էլ չերևեր, Թուր Ի Թամն ասաց ընկերոջ.—Ես առաջին անգամն եմ ասի, ղուրպաթ ելեր իմ կտրճուութենի հ՚ապով, ես կէրթամ յոթ գլխեն տևի առաջ, եթե իմ աչք փարա երևեր, աշխարքի փարեն իմ հորն էր, չընք թողե հ՚իգե, ես լե պզտիկ մարդու մը տղա չեմ, թագավորի տղա եմ, իմ հոր թախթ ու սանտանաթը չէի թողեր գար։

Զընկեր տալտա տեղ մը պահեց ու քշեց գնաց յոթ գլխեն տևի ճամբու վրեն կանավ։ Ի՞նչ տեսնա. տեսավ օր յոթ գլխեն տև էնդիեն կիգեր, ծառ մը կտրի, դրի վրը փեճին, ամեկ թփեն ջուն ու ջանավար մը կախեր է, հա կէնե՝ սար ու ձոր կթնդա ու կիգա. հեռուեն երբ տեսավ զԹուր ի Թամ.— է՜յ, հողածին, զիմ աղբերը սպանեցիր, հըմկա լե էկեր իս կայնի աչքիս առշև,— հա՜,— ասաց ու զծառ մարմնդեց, թոզ ու տյուման զաշխարհ վերցուց։ Թուր ի Թամ թռավ կայնավ մեկ կողմ։

— Օղորդ օր հում կաթ ուտողին ասած ին իթիպար չկա. իմ աղբոր սպանողեն օսկոր մը չի մնաց օր դնենք բերանս, սիրտս ըռհաթեր։

Էդ խոսքի մեջն էր, Թուր ի Թամն էն դիեն վերուց ասաց.—Կի, սորա շըքրի,— ու հատ մը էկավ, յոթ գլուխ լե կտրավ, հ՚ընկավ գետին, կըտրեց զտրսնուշորս անկաճը, լցեց ռամլետար աղբոր ճեպ ու դարձան էկան քեռշկի աղչկա մոտ։

Աղչիկ օր տեսավ էրկու ձիավորներ մեկ լե դարձան էկան, իշան քեռշկի դուռ, մալուլավ, մնաց.— Հա՜, հըմկա յոթ գլխեն տև կիգա, ես ի՞նչ ճուհապ իտամ ուրին, զձզիկ օր էդա տեղ տեսավ, հումուլում կուտե, թե կարելի է՝ թողեք գացեք, քանի չէկեր է, օղորդ օր հ՚անգրցավ, գալու վրա է։

Թուր ի Թամ պոռաց.— Անզգամ, զդուռ բաց, իմ աղբեր սաղ մնա՝ զյոթ գլխեն տև սպաներ է, տրսնուշորս անկաճ լե լրցուկ է ճեպ։

Ելան վի, հանեց ցուցուց աղչկան, աղչիկ երբոր զտևի անկճվըներ տեսավ՝ շատ շնորհակալ էղավ. կերան խմեցին, Թուր ի Թամ զաղչիկն ու ռամլետար աղբեր հասուց ուրանց սրտի մուրատին, էրկու օր լե մնաց հոն. վիրեք օր թմավ, ելավ ընկավ ճամբախ։ Երբ Թուր ի Թամ բարեմնաց էղավ, կէրթեր, ռամլետար աղբերն ասաց.—Աղբեր, դու էղա խըտար սղեկութեն էրիր մզիկ ու կէրթաս, նշան մը չթողիր որպեսզի, երբ նեղության մեջ էղնիս՝ հավար իգանք։

— Աղբեր,— ասաց Թուր ի Թամ,— ի՞նչ նշան թողիմ քզիկ, զէդա թուղթ լե (հանեց ճեպեն թուղթըմ, տվեց) զարկ քու պատ. երբ իմ թուղթ սևցավ ու գիր չկարդացվավ, գիտցիր օր ես նեղության մեջ եմ, հա, օր իգաս հասնես։

Թուր ի Թամ բարեմնաց էղավ ուր աղբորնե ու կնկաց, ընկավ ճամբախ, էնդոնք լե դարձան ուրանց քեռշկի։ Թե ռամլետար ու թե տաղլաճի աղբեր հ՚ըմնօր աստծու փեշերուց կախուկ են, տելակ կէնեն Թուր ի Թամին, օր զիրենք մուրատի հասուցեր էր, քեռշկ ու սարայու, օսկու ու արծթի տեր էր էրի; կասին՝ կէղնի օր էդ աղեկության տկեն ելնենք։

Թուր ի Թամ երբ շոկվավ էրկու աղբորնե, մնաց մենակ ու ընկավ ուր մուրատի ետև, շատ քշեց, քիչ քշեց, հող ու շրի մը ռաստ էկավ. սար սպիտակ, քար սպիտակ, հող սպիտակ, շուր սպիտակ, փետ սպի-

տակ։ Քշեց աղբրի մը վրա իջավ, փրդուճ մը հաց կերավ, ձին թիմրեց ու ելավ հեծավ. երբ հեծավ, պագեց ձիու երկու աչք.— Հրեղեն, զուռյան էղնիմ աչքերուդ, հար էտագա ինչ որ էրեր ինք, հեչ է, նոր կիգա խալմախալի տեղ, ղմըզի չամչցուս,— ու սկսավ քրտհրեն տնտնալ.

Չոլ ու չոլըստան
Պառի ու պառիստան
Հանինչու հաթ գվըռաան
Սարե Թուր Ի Թամ
Քեաթիե խաղե գըրան*։

Ձեն կտրեց ու ձին չորս ոտք վերուց տեսավ որ հեռուանց բարակ ծուխ մը կելներ, բռնեց ծուխ ու գնաց։ Գնաց ռաստ էկավ քեոշկ ու սարի մը. քու տուն շինվի ու քու քեոշկին, պատեր բոլոր ալմաստ քարերով շինուկ էր, էնքան որ արև կզարկեր՝ մարդ կուղեր որ իշքեր. պաղյե մը կար դռան առաջ, աստված ինչ ծառ ու պտուղ որ ստեղծեր էր՝ մեջն էր, մեկ կողմ անմահության ջուր կթալեր, մեկ կողմեն լե ծառերու վրա ամեն տեսակ հավքերը լցուկ էին, կկանչեին, մարդու բերան բաց կմներ. մեկ խոսքով՝ դրախտ լե հըմալ չէր։ Քշեց ձին քեոշկի դուռ իջավ ու թամաշա կէներ չորս կողմ. դու մի ասեր՝ էդի Օսկեծամի քեոշկ ու սարեն է։ Օսկիծամ երբ ձիու ոտաց ձեն կառնե, ղգլուխ փանչարից դուրս կթալե որ իշքե, ծամեր սըրսըրուկ վըր փեճերուն, արեգական պես փիլք կիտեր, շող լե զարկեր էր ջրի մեջ։ Թուր Ի Թամ որ տեսավ Օսկիծամի պատկեր ջրի մեջ ու գլուխ վի վիրուց՝ աչք առավ հ՛ինք, խելք գլխեն գնաց, էսօր չմնռեր է՝ հազար տարի առաջ է մեռի։ Օսկիծամ լե որ տղեն տեսավ, յոթ տեղեն խոնչան կտրավ, իջավ բացեց դերկյահն, վերուց զԹուր Ի Թամի գլուխը, դրեց վըր ուր չոքին, պաղ ջրով շփեց զերես, սիրտ ճմռեց, խելք էկավ տղի գլուխ, վերուց տարավ վի.— Մեռնիմ ղքի ու քու քես ու քիսպաթին, դու զէն ասի՝ իմա՞լ իս էկի էդա տեղ, իմա՞լ պահիմ ղքզիկ, հըմկա տաս գլխեն տև կիգա ուր էրկու աղբոր համար սիրտ լե յարալի է, հու էնե՝ ղքզի կկլու, թե որ ղքզիկ ուտե, ես էլ աշխարհ ի՞նչ կէնեմ, կթալիմ ղիս էդա փանչարից՝ մեռնիմ։

Թուր Ի Թամ ասաց Օսկիծամին.— Ջանըմ, դու էտոր համար հիչ հոգ մ՛ուտի, աստված իմալ որ կամեցեր է՝ հըմալ կէղնի, դու հըլե փրդուճ մը հաց բի ուտիմ, էտոր վրեն վերջ կֆքրինք։

Կերան խմեցին, փաթվըտան իրար՝ քեֆ ուրախություն էրին։ Օսկիծամ զգլուխ վերուց, տեսավ որ տևի գալու վախտն է.— Մեռնիմ գըլխուդ ու արևուդ, տևի գալու ատեն է, ճար մը կէնիս, թե չէ էկավ՝ ղքզիկ հու կէնե, կկլու։

---

* Անմշակ ու լոր երկրներ, ամառն անցավ եկավ ձմեռ, Թուր Ի Թամի գլուխը նոր ծանր փորձությունների մեջ ընկավ (Ս. Կ.)։

5—915

Թուր Ի Թամ իջավ, քաշեց զուր ձին գուրս, հեծավ կանչեց զաստ-
ված ու Օսկիծամեն հարցուց զտևի ճամբախ։ Օսկիծամ ասաց.— Էնա
ճամբախն է, օր արճիճով շինուկ է, տևի ճամբախն էն է, որովհետև հող
չվերու զինք, կչքի հողու մեջ, ուրիշ ճամբով չկրնա երթա։

Քիչ մը տեղ գնաց հեռացավ քեռշկեն, տեսավ օր սպիտակ տև բուլ
մը ծառ չչքերով հանի դրի վրը թևին, բոլոր հավքեր թառուկ են վրէն,
ջուն ու ջանավար լե ձգեր է առջև, կպոռա՝ երկինք ու գետինք կթնդա ու
կիգա։ Երբ Թուր Ի Թամ տևի դեմ ելավ.— Իմ աղբերտոց սպանող ու իմ
անտավորի՞կ. ես քզիկ երկինք կփնտռենք, օրհնյալ է աստված՝ գետին
գտա. դու հինգ ու յոթ գլխեն տևերուն ես ռաստ էկի, կանի տես ինչ խա-
ղամ քու գլուխ։

Թուր Ի Թամ ասաց.— Անաստված, ես զաթի քզիկ համար եմ էկի,
մեկ մը զքու հալ հոգացի, սորա կրցար ինչ գինաս էրե։

Էդ խոսք դրա Թուր Ի Թամի բերան էր՝ տաս գլխեն տև զգուող թա-
լեց, թուր մը լե Թուր Ի Թամ թալեց ու էկան իրար. նե էնտոր գուռզ բան
էրեց, նե էնտոր թուր. մինչև մութ տվեց գետին, կռվրտան հվթրան, հ՝ըն-
կան գետին, ու իրարու բան մը չկրցան էնել։

Սպիտակ տև ասաց Թուր Ի Թամին.— Հերիք է զիրար տանենք բե-
ռենք, էդա հայվան լե խեղճ է, էդոր հոգին նե դու իս տվե, նե ես. ես գի-
նամ օր իմ աղբրրտանք լե դու իս սպանի։ Իմ մեծ տյուշման օր կա՝
դու իս. հ՝իրկուն է, էրթանք իմ տուն, ուտենք խմենք, առավոտուն հ՝ի-
գանք իրար, յա՛ աստված ընծի կիտա, յա՛ քզիկ։

Տևն ու Թուր Ի Թամ հրտ իրար դարձան էկան քեռշկ, կերան, խմեցին,
պառկան քնան, առավոտուն ելան ձիաններով արճճե կալի վրեն էկան
իրար մինչև կեսօր կռվան, իրարու բան չկրցին էնել, իջան ձիաններու
վրայեն, գյուլաշ էկան իրար։ Թուր Ի Թամ առաջին հեղ զորեց, սպի-
տակ տև շուր ի չոքերը իջավ արճճի մեջ. սպիտակ տև օր զորեց, Թուր
Ի Թամ հար ճաներ իջավ. Թուր Ի Թամ մեկ լե զորեց, սպիտակ տև հար
ի սիրտ իջավ արճճի մեջ. տև զորեց՝ Թուր Ի Թամ շուր ի չոքեր իջավ.
անդամ լե Թուր Ի Թամ օր զորեց՝ տև շուր ի վիղ չքավ արճճի մեջ.
քաշեց զթուր, կտրեց զգլուխ, ղճանտակ էրեց կտոր-կտոր, ու զքսան ան-
կաճ կտրեց, տարավ լցեց Օսկիծամի առջև։ Առտուն օր էղավ, Օսկիծամ
ու Թուր Ի Թամ ելան դուրս, տեսան օր տևի կտորտանք էկեր ին իրա-
րու մոտ, տև պիտի սաղնա։ Օսկիծամ ասաց Թուր Ի Թամին.— Մարդ,
մինչև օր դու զտևի կտորտանք չվառես ու փոշին չիտաս քամու հետ, քզիկ
էնտոր ձեռքեն ազատիլ չկա. օր մը կսաղնա, ելնի ուտե զքզիկ։

Թուր Ի Թամ բերեց տևի կտորտանք, թալեց կրակ, վառեց ու զփո-
շին տվեց քամու հետ, վերջ առավ զՕսկիծամն ու սկսան զիրար վայելել։

Ժում ու ժամանակ մը էդպես ընցուցին, ցերեկ ավ ու խուշի կերթեր

Թուր Ի Թամ, հ՝իրկուն կդառնար, կդրկեր զՕսկիծամն ու կպառկեր։ Օր մը Թուր Ի Թամ նեճրութենի ելած ատեն, Օսկիծամ կելնի օր էրթա օլրտի. կէրթա ծովու պռուկ օր քիչ մը լվացվի, քեռչկ ծովու պռուկ շինուկ էր, ծամ մը դլխուց կփրթնի հ՝ընկնի ջրի մեջ, տաղլեք կզարկեն տանեն հանեն Քաջանց Թագավորի քեռշկի առաջ, օր նույնպես ծովու պռուկ շինուկ էր։ Թագավորի ձիանք կէրթան ծովու պռուկ օր ջուր խմեն, էդ ծամի շավխ կզարկե, ուրանք կխրռտան դառնան ետ։ Թագավոր տեսավ, ասաց.—Էդ ի՞նչ է էդի օր իմ ձիանք ջուր չըն խմի։

Իշքեց տեսավ օր բան մը ծովու մեջ օսկու նման կփրլա, էնտորնե ձիանք կխռտին ու դառնան ետ։ Ճամբեց լողվորդներ բերել տվեց, իշքեց տեսավ օր ծամ է ու ծամ չէ. կանչեց զուր բետաբետները, ջադուքար պառվրներ, սեր-բանտները, էկան ու չկրցան իրարուց հանել, մենակ մեկ պառավ մանցեր էր, էն լե ասեր էր. «Եթե թագավոր կանչե զիս, կիդամ ու ղէդ բանի մեկնություն կիտամ ուրեն»։ Էկան ասին թագավորին. թագավոր մարդ ճամբեց, բերեց ղպառավ ու զծամ ցուցուց, պառավ ասաց.— Թադավոր, դու իմա՞լ թագավոր իս, իմա՞լ չըս գինա էդի ինչ է. էդի իսնի ծամ է, ինկեր է ջրի մեջ, էկեր է հասեր է հար հ՝ոդա, աստված ղէնիկ քզիկ է լայեղ տեսի, մեկ մը գտի, օր էրթա բերե. էդի Թուր Ի Թամ թագավորի կնկա գլխի ծամն է, էն Թուր Ի Թամ թագավորին՝ օր հինգ, յոթ ու տաս գլխեն տևեր սպանեց. անունն լե Օսկիծամ է։

Թադավորն ասաց.— Հըմալ է զէդ ամեն դու դինաս, մեկ լե դու մինակ կրնաս բերիս ղէնիկ ընծի, քենե կուզեմ։

— Եթե քու սիրտ կուզե, ես կէրթամ բերեմ, բայց ընծիկ ձձում մը պետք է, օր հեծնեմ էրթամ բերեմ։

Թագավոր պառվու թարիֆ էրածի պես փակ ու բալնըքով, մեջ լե դարտակ ձձում մը ջինել տվավ և հանձնեց պառվուն, պառավ զօձվենի խամչին առավ ձեռք, սեր-բանտի կապս էրեց, ձձում թալեց վըր ծովուն ու քշեց։ Շատ գնաց, քիչ գնաց՝ Թուր Ի Թամ թագավորի քեռչկ ու սարայու առջև ելավ դուրս, քաջեց ղձձում հանեց ծովու պռուկ, փորեց ավաղ ու նշնով տեղ մը հորեց, ելավ հագավ փըռրթուկ շորեր, փետ մը առավ ձեռք, թղպեխ սկսավ քաշել, զաստված կանչեց ու գնաց քեռշկի դուռ կանավ, ու ինք ուրեն աղոթելով աստծու երես ցած կբերեր. վերջ դարձավ Օսկիծամին, ասաց.— Խնդիրք կէնիմ քու օտնեն ու ձեռնեն օր բանաս դուռ, հ՝իգամ վի, անորդի մեբիկ իմ, տեր ու տիրական չունիմ, կուզեք էնիմ խըղմաթ ձղիկ ու ապրիմ, կուզիս փրդուճ մը հաց տուր ուտեմ էրթամ։

Ինչ լեզու օր բանցուց, Օսկիծամ ղպառավ չառավ ներս.— Կորի, ջատուքար պառավ, ո՞ր գինա հըմկա ինչ կա քու տակ, էկեր ես՝ գինամ

փորձանք մը պիտի բերիս մըր գլխու վրեն. քու տեսակ պառվըներ սեր-բանտ կէղնին։

Խոսքը Օսկիծամի բերան էր, Թուր Ի Թամ ավճութենից էկավ. իշավ քեռշկի դուռ. տեսավ օր պառավ մը կա կանուկ հ՝ոդի, ու իր կնկան յալ-վարմիշ կէղնի։ Հարցուց.— Պառավ, հ՝որի՞ իս կանի էգտեխ, հ՝ուստե՞ն կիգաս, դու ի՞նչ պառավ իս։

Իմալ օր Օսկիծամին պատմեր էր, նախլ էրեց զուր գլխու գալած Թուր Ի Թամին։

— Կնիկ, էդ կէղնի մզիկ ձեռաց տառմալ մը, հ՝ո՞րի չըս առնի ներս։

Օսկիծամ վերուց ասաց էրկան.—Էդ տեսակ պառվըներ սեր-բանտ կէղնին, էտոնց ամլեաթ չէղնի, օր մը փորձանք կբերեն մըր գլխու վրեն, էտոր համար ներս չըմ առնի։

Թուր Ի Թամ հերսոտավ կնկա հետ։— Կնիկ, էդի ի՞նչ է, ուր փոր-ձանք ինչ պիտի էղնի, գեշ բան մը տեսա մոտ՝ կբռնիմ մարմնդիմ, գլուխ կէրթա, շանտակ կմնա։

Օսկիծամ ասաց.— Իմ կամքով էղնի՝ զէդ պառավ չըմ թողի իմ տուն. կառնիս ներս՝ դու գինաս։

Առան ներս։ Թուր Ի Թամ ու Օսկիծամ մտան ուրենց հ՝օտեն, կերան խմեցին ու իշքեցին ուրանց քեֆին, պառավն ալ թունտրատուն մեկ կողմ կուժուրավ ու մինչև առտուն տըկեք իրար չէկան, կէոյա աղոթք կէներ Թուր Ի Թամի արևուն։ Աղոթքան օր էղավ, շուտ մ՝ ելավ լվացվավ, օճախ վառեց, շուր հազրեց, սրբվան, էկան մեկ լե ուրանց տեղ նստան, Թուր Ի Թամն կնկան ասաց.— Զպառավ չըր թողեր ներս, կտեսնաս ի՞նչ խո-ռոտիկ խղմաթ մը կէնե։ Կերավ զուր ակրատ ու ելավ հեծավ, գնաց ավ-ճութենի։

Տաս-տասնուհինգ օր էդ հըմալ ընցուցին, օր մը լե պառավ Օսկի-ծամին ասաց.— Օսկիծամ, հ՝ըմնօր առտուն Թուր Ի Թամ կէրթա ավ-խուշի, հ՝իրկուն նոր կիգա։ Մըր սըպր չի գա, մենակ հարցու ուտնե, տես-նանք ի՞նչ է ուր հոգին, հետ կխաղանք, հար իգա։

Էնքան ասաց օր Օսկիծամի պին լցեց. կնիկ ու կարճ խելք, Օսկիծա-մի խելք լե պառկեր էր։ Հ՝իրկուն օր Թուր Ի Թամ դարձավ էկավ տուն, Օսկիծամը ուր մատեն էրեց, նստավ, հարցուց կնկաց.—Հ՝որի՞ իս էրի զքու մատեն։

Ասաց.— Ես կէնիմ զիմ մատեն, որ կէնե զուր մատեն, էդա քանե-լանց տարի դու օր կէրթաս օրըրտիս իգաս, ես մենակ կմնամ, չըս ասի քու հոգին ի՞նչ է, իսկի չէ՞ կխաղամ հետ, հար հ՝իդաս։

— Էդոր համա՞ր իս էրի զքու մատեն,— ասաց Թուր Ի Թամ,— էդի խոլայի է, իմ հոգին ավլի մեջն է։

Մնաց լուսուն. Թուր Ի Թամ օր գնաց նեճրութենի ու թունդիր կվառներ, պառավ բերեց զավել, խաղցավ հետ ու գողտուկ մը հլոտեց, թալեց թունդիր ու ասաց.— Զեռքես հ'ընկավ։

Երբ Օսկիծամ զավել կափսոսեր, ասաց.— Տեսշեն, Թուր Ի Թամ խարեր է զքղիկ, հիշ հոգին ավլի մեջ կեղնի՞։

Մնաց հ'իրկուն, երբ Թուր Ի Թամ դարձավ էկավ տուն, պառավ Օսկիծամին ասաց.— Զասի՞ զքղիկ խաբեր է. եթե հոգին ավլի մեջ էղներ՝ չէր իդար։

Աղջիկ նորեն էրեց զուր մատեն, նստավ։ Երբ Թուր Ի Թամ էկավ տեսավ կնիկ զմատեն էրեր է, նորեն հարցուց.— Կնիկ, աստված խեր էնե, մեկ լե զբու մատեն հ'որի՞ իս էրի, նստի։

— Երեկ հարցուցի քու հոգին ո՞ւր է դրուկ, ասե, ցերեկ կխաղամ հետ հար հ'իգաս, ասիր՝ ավելի մեջն է. հեչ հոգին ավլի մեջ կէղնի՞, ըսել է՝ դու դիս խաբեցիր, էդ խըտար լե քու դիս ուզելն է, եթե դու դիս ուզեիր, խոսք ինծնե չէիր պահեր։

Թուր Ի Թամ էն օր լե խաբեց զկնիկ, էդ հեղ ղցախավել ցուցուց։ Օլոր օր պառավ զցախավել լե բերեց թալեց թունդիր ու հ'իրկուն Թուր Ի Թամ սաղ սալամաթ դարձավ էկավ տուն։ Մեկել հ'իրկուն կնիկ էրեց զմատեն ու նստավ. կնիկ ու կարճ միտք։

Պառավ էրկուսն էլ կապեր էր։ Էլ ջանդարդի էղան, բան օր ասաց.— Կնիկ, քու սորվցնողի վիղը կոտրի, դու հ'որի՞ իս հ'ընկի իմ հոգու ետևը. իմ հոգին իմ թրի մեջն է, թե օր զիմ թուր քաշեն հանեն թամքեն ու կորցուն, ես կմեռնիմ։

Գիշեր օր էղավ, Օսկիծամ ու Թուր Ի Թամ քնուկ են, պառավ հ'ուշիկ մը բացեց ղոտի դուռը, թուր թամքեն քաշեց, գնաց կանավ ծովու պռուկ ու քանի օր ուժ ուներ, լոռտեց ջրի մեջ։ Լուսուն շուտ ելավ, ավլեց, հ'իստկեց, կրակ վառեց ու գնաց ուր տեղ նստավ ու իշքեց Թուր Ի Թամին օր ելնի քնուց։ Օսկիծամ տեսավ օր Թուր Ի Թամ քնուց չելնի, վերուց ասաց պառվուն.— Թուր Ի Թամ էսօր շատ քնավ։

Պառավ ասաց.— Զայիր նեղեցեր է, ի՞նչ կուզիս, թող քնե։

Կեսօր էկավ, նորեն չելավ քնուց։

Պառավ ասաց Օսկիծամին.— Դու գնա հեշըրցուր, հերիք է քնի,— մախսուս ղրկեց քնքնելու համար, թե՝ օղորդ մեռե՞ր է։

Օսկիծամ գնաց լլկեց ու լլկեց, տեղեն չխըլվըլաց, ըստ հախ գիտցավ օր մեռեր է, նստավ զգոմփ դրեց գլուխ ու սկսավ ձենքել ու լալ։ Միտք հ'ընկավ թուր, աչք վերուց տեսավ օր թուր ուր տեղ չէ, հասկցավ օր պառավ օղյաթ մը հաներ է թրի գլուխ, բայց ձեռքեն գացեր էր։

Երբ պառավ տեսավ օր Թուր Ի Թամին էլ ելնելիք չկա, ասաց Օսկի-

ծամին.— Գինա՜ս, ես քզիկ համար եմ էկի, էկեր իմ զքզիկ կտանիմ Քաշանց թագավորին։

Օսկիծամ ափարերնեց զպառավ.— Բերանդ իփու, էգ հըմալ բան չէղնի։

— Մակար թե կէղնի, զորով կտանիմ,— ու գամբոյ մը վըր Օսկիծամի վզին, ուշք էսօր չընցեր է, հազար տարի առաջ ընցեր է. զծամեր փաթթեց վըր ձեռքին ու քաշքաշ հար ծովու պռուկ տարավ, հանեց ձձում, Օսկիծամ դրեց մեջ, ձեռք առավ զօձվենի խամչին ու հ՝ընկավ ծովու վրեն։ Հ՝ու՞ր իս, Քաշանց թագավորի հ՝երկիր, էկա քի։

Էնի թող էրթա ուր ճամբու հետ, մենք դառնանք Թուր Ի Թամի և ուր էրկու աղբոր վրեն։

Տաղլաճի աղբեր լուսուն երբ ելավ ու խահվեն ձեռք օր առավ՝ տեսավ օր խահվեն արուն է դարձի, հուշիկ մը դրեց գետին։—Կնիկ, զիմ ձին քաշե դուրս, իմ Թուր Ի Թամ աղբեր նեղությյան մեջ է։

Հեծավ զուր ձին ու քշեց։

Ռամլետար աղբեր էլ իշքեց Թուր Ի Թամի տված թղթի վրեն, տեսավ օր գիր չմնացեր է վրեն, թուղթ լե սուցեր է, էղի դործելի։

— Կնիկ, դու էլ զիմ ձին քաշե դուրս, իմ աչքի լուս Թուր Ի Թամ աղբեր նեղությյան մեջ է։

Զգլուխ դուրս հանեց, տեսավ օր տաղլաճի աղբեր կանուկ է դուս։— Աղբեր, խեր էղնի, դու հ՝ոդա՞։

— Վազ արի, էն օր օր Թուր Ի Թամ ջոկվավ հ՝իսնե, նշան մը տվեց ընծիկ, թե՝ երբոր խահվեն կխմիս ու խահվեն արուն կդառնա, գիտցիր օր նեղությյան մեջ իմ, հա օր հասնիս։

Ու ռամլետար աղբեր լե ասաց.— Էդ տեսակ նշան մը լե ընծիկ էր տվի։

Էրկու աղբեր առանց հաց ուտելու, շուր խմելու, ելան հնկան ճամբախ ու քշեցին էկան Թուր Ի Թամի քեռշկի գուռ իշան, տեսան օր քեռշկի դռները վըր միշաց թիք բաց, մարդ ու մատաթ չկա։ Քաշեցին ձիաննին ներս, տեսան օր Հրեղեն քրպեն փեքոլ էրեր է, ու շուր ի շոքերը իշեր է հողի մեջ. ելան վի, տեսան օր Թուր Ի Թամ լե մեռեր է, պառկուկ է գետին. իշեցին օր Թուր Ի Թամի թուր ուր տեղ չէ, հասկցան օր գողցեր ին. քիչ մը գոռում օր էրին, իրարու ասին.— Աղբեր, լալ փարա չէնե, զէդոր թուր պետք է գտնանք, պելքեմ ուր հոգին դառնա հ՝ինք։

Ռամլետար աղբեր թալեց զիր ոբսմ, գնաց կանավ ծովու վրեն ու ասաց.— Տաղլաճի աղբեր, Թուր Ի Թամի թուր թալած ին ծովու մեջ, մեծ ձուկ մը զընդոր լաստ առեր է զուր բերան, ուրախությենեն շաբաթ մը արթուն մանցեր է, էսօր իրեք օր կէնե օր քներ է, էրկու օր լե քնուկ

պիտի մնա, կրնաս հրմկա ջարե մ՝ էրե, քանի չարթնցեր է, արթնցավ՝ էլ դանալ չաթին է։

Ելան դացին ծովու պռուկ, ռամլետար աղբեր անգամ լե զուր ոբսմ թալեց, գնաց կանավ թրի վրեն ու սկսավ տբստրղալ։ Տաղլաճի աղբեր հադավ սուր ջրի հալվրներ ու սրկավ ջրի մեջ. գնաց տեսավ օր՝ օղորդ, մեծ ձուկ մը թրի լաստիկ առեր է ուր բերան ու կխռա, դուրս մնացեր է մինակ թրի կոթ, եթե քաշե՝ ձուկ կհ՝եշրնա, դինք կկլու, չքաշե՝ չէղնի։ Ելավ դուրս, հետ չվան մը առավ ու իջավ, չվանի մեկ ճոթ լե տվեց ռամլետար աղբոր ձեռք ու սրկավ, լորկի կապ էրեց զչրվան ու էձգեց թրի կոթի մեջ ու ինք ելավ դուրս ու ռամլետար աղբոր հետ քանի օր ուժ ունին՝ զչվան քաշեցին, մեկ լե տեսան, թուր ելավ շրի երես։ Երբ թուր հանեցին, ձուկ հ՝իմցավ, թրի քրպուն տյուման մը էրեց, աստված ինք նշանց չի տա. էլ ուր զարկեց, չկրցավ դթուր գտնել։

Աղբրտանք առան դթուր, դարձան էկան քեռշկ, զարկեցին ուր թամքի մեջ, մեկ լե տեսան օր թուր ի թամ ճմբլկտաց, ելավ նստավ ուր տեղի մեջ։—Օխե՜շ, ինչ անուշ քուն մ՝ էր, հ՝որի՞ չթողիք օր քնենք։

Աղբրտանք վերցին ասին.— Աստված զքու տուն շինե, ի՞նչ քուն էր, դու մեռուկ իր, քու թուրը թալած ին ծովու մեջ, մենք հանեցինք բերինք, էդ ինչ թֆախ է էկի քու վրեն, հեղ մը մժլե անկաճ էնենք։

Նոր ելավ նստավ, գլխեն հար տակ չուր գալածը ու պառվու էրածը նախլ էրեց ուր աղբրտոց, երեք օր աղբրտոց հետ կերավ ու խմեց, ելավ ճամբու դրեց ղէնոնք ու իջավ ախոռ, քաշեց ձին դուրս, հեծավ ու ասաց.— Հրեղեն, գիս էն ճամբով կտանես, օր Օսկիծամին է տարի։

Մեկ լե տեսավ օր Հրեղեն քանի ուժ ուներ երկինք բանձրցավ ու դինք ծովու մը պռուկ, քաղքի մը առեջ իջուց, մոտեցավ քաղքին, տեսավ օր տրհոլ ու զուտնի ձեն հ՝երկինք կելնի, քաղաք քաղքով քեֆ ու ուրախությյան մեջ ին։ Մարդու մը ռաստ էկավ, հարցուց.— Էնդա ի՞նչ ձեն է։

Ասաց.— Մըր թագավորի հարսնիքն է, Թուր ի Թամ թագավորի կնիկ՝ Օսկիծամ պառավ բերեր է մըր թագավորին, էսօր եռսուն օր կէնե էնտոր հարսնիքն է. հրմկա լե Օսկիծամ աղու առեր է ձեռք, քառսուն օր թըմավ, էկան հասան ուրեն՝ էկան, չէկան՝ կխմե աղու, մեռնի ու ղմրը թագավոր չառնե։

— Էդա հրմլա չէղնի, ղարիպն ու քոռ մեկ է,— ասաց ինքն ուրեն,— ղձու կյամ կթալիմ, ուր օր կանավ՝ կէրթամ հ՝ոնի իջնիմ։

Թորկեց, գնաց պառվու մը դուռ կանավ. պառավ մը ելավ դուրս։— Բարև։

— Աստծու բարին։

— Նանե, մսաֆիր կպահի՞ս։

— Լաո, հ՝որի չըմ պահի, մսաֆըր աստծուն է։

Ջին քաշեց ներս, կապեց, բրդուճ մը հաց կերավ, պառվու ուշ ու միտք կպուկ էր Թուր Ի Թամին, էնքան օր խորոտիկ էր, կիշքէր տղի բերան։ Երբ հացի սեղան վերցին տարան, վիրուց Թուր Ի Թամ, ասաց.— Նանե, տրհոլ ու զուռնի ձեն կիգա, կերևա հարսնիք է. աստված խիր էնե, էդ ի՞նչ տրհոլ ու զուռնի ձեն է։

Նանեն, իմալ որ ճամբու հետ ռաստ էկող մարդ թարիֆ էրեր էր, ինք լե պատմեց Թուր Ի Թամին։

— Նանե, դու դինաս օր ղարիպ մարդու սիրտ ու հ՝ելման գետ մեկ է, էրթանք քիչ մը թամաշա էնենք զէդ հարսնիքն ու հ՝իգանք։

— Լաո, կէրթաս բան մը չըմ ասի, մինակ բան մը կասիմ, զիմ խոսք չկոտրես. կէրթաս հարսնիք, չէղնի գովընտի գլուխ բռնիս ու խաղաս. էն գովընտի գլուխ բռնող իմ տղեն է. երեք փաթ կխաղա՝ կիջնի, կելնի, ըստ հախ պառավ կբռնե խաղա, էն օր բերեր է զՕսկիծամ. եթե էրթաս բռնիս գովընտի գլուխ, հանդե իմ տղեն ճլոթ մը կզարկե քզիկ՝ քու վիզ կդառնա ետևանց ու ափսոս կտրիճ մըն իս, իմ ցավալուց զէդի կասիմ։

— Նանե, քու խրատ վըր իմ դլխուն ու աչքերուն, ես քոռցե՞ր եմ, ընծիկ ի՞նչ գործ կա գովընտի հետ։

Ելավ ու գնաց. տեսավ օր յարե կեոյնե պառավ բռներ է գովընտի գլուխ ու կխաղա. պառավ երեք փաթ օր թըմավ՝ ըստ հաղ տղե մը ելավ բռնեց ու սկսավ խաղալ. երբ տղեն նորեն կանավ ու խաղաց, էկավ հասավ պառվու դեմ, ելավ կանավ առաջ, պառվու տղեն ասաց.— Դինամ դու ղարիբ ես ու չգիտող. զէդա տըրպ տվի աստծու խաթըր։

Տղեն փաթ մը լե զըվըռնեց. էկավ Թուր Ի Թամի դեմ, մեկ լե ելավ կանավ առաջ.—էդ հաղ լե կիտամ քու ղարիպության խաթըր. եթե մեկ լե ելնիս կանիս, ճլոթ մը կզարկիմ քզիկ, վիզդ դառնա ետևանց։

Մեկ լե փաթ մը օր տվեց, դարձավ էկավ, Թուր Ի Թամ ելավ առաջ, տղեն քանի մի պիտեր ճլոթ մը զարկեց, ճլոթ չէր՝ թոփ մըն էր. Թուր Ի Թամ ամենևին աչք չթարթեց. պառվու տղեն քըրպեն հազար կտոր կէղներ. «Յա, ես էղնիմ Քաջանց թագավորի գուլաշճին, ճլոթ զարկեմ ու երես չդարձուն». թողեց զհարսնիք, էկավ տուն, հ՝ընկեր էր փորու վրեն, կմեռներ.— Յամա՜ն, նանե, մեռա։

Մամ հարցուց.— Լաո, մեկ լե ի՞նչ է էղի, դու քու փորուց կպոռաս։

— Նանե, էլ ի՞նչ էղնի, ղարիպ տղե մը էկեր էր հարսնիք, իրեք հեզ ելավ կանավ իմ առջև, ըսաց՝ «Զգովընտի գլուխ տուր ընծիկ». առջին հեզ տվի աստծու խաթըր, երկրորդ հեզ ուր ղարիպության, իրեք օր թըմավ՝ ճլոթ մը զարկի, ճլոթ մը չէր, թոփ մ՝ էր, երես լե չդարցուց։

— Լաո, քո աչք քոռներ, իմա՞լ քու ձեռք բռնեց, զարկեցիր, չէ՞ էնի քու մեծ աղբերն է, դրա դու չըր էղի, Թողեց գնաց ղուրպաթ, ըսին մեռեր է. հըմկա դարձեր է էկի, անուն լե Թուր ի Թամ է, ասեր է՝ եր-Թամ տեսություն մ՝ էնիմ իմ աղբոր ու մոր հետ, դառնամ հ՝իգամ։

— Նանե, շուտով ղիմ աղբեր հասու իմ ձեռք, հըմկա ես կմեռնեմ, ղիրար պագնինք՝ իչնի իմ հերս։

Պառավ գնաց օր ղԹուր ի Թամ կանչեր, տեսավ էնդիեն կիգա, իմալ օր ինք ուր տղին պատմեր էր, Թուր ի Թամին սովրեցուց օր հըմալե ասե։ Թուր ի Թամ էկավ տուն, պառվու տղեն մեկ լե հարցուց փորձեց, Երբ գիտցավ օր ուր աղբերն է՝ փաթթվան իրար, պագեցին զիրար, վերջ ասաց.— Էհ, աղբեր, դու բարով ես էկի, քու գլուխ ինչ ելեր է, պատմե մղիկ։

Թուր ի Թամն էլ մեկիկ-մեկիկ ուր գլխու դալածը գլխե հաղ տակ պատմեց պառվուն ու ուր տղին, երբ եկավ էն տեղ, ասաց.— Օսկիծամ իմ կնիկն է, ու պառավ էկեր է բերի Քաջանց Թագավորին։

Դուլաշճի աղբեր ասաց.— Հըմալ է, դու ձեն մի հանե, ընիկ հասավ հ՝իս, ելի էրթանք հարսնից տուն, տես քու աղբեր ի՞նչ կէնե։

Թուր ի Թամ ասաց.— Զիմ սիրտ պառավն ի վառի, էնի իմ վրեն, մեկելտոնք ինչ դինաս էրե։

Սլան գնացին հարսնիցի մեջ. Թուր ի Թամ տեսավ օր պառավ բրոներ է դդովընտի գլուխ ու կխաղա. լանկե մը զարկեց՝ հ՝ընկավ գետին ու լռնեց մարմընդեց գլուխ, դրա հըմկա լե կէրթա. ըստ հաղ հ՝ընկան հարսնվորներու մեջ, ինչքան օր Թուր ի Թամ սպանեց, էնքան էլ ուր ձին։ Ձեն հասավ Թագավորին, վերուց զուր ասքյարն էկավ։ Էրկու աղբեր հ՝ընկան ասքրրի մեջ, կբռնեն մարմնդեն, գլուխ կէրթեր, ջանդակ կմներ։ Մարդ չթողեցին օր սաղ դառներ հետ։ Վերջ Թագավորի գլուխ լե կտրեցին, Թուր ի Թամ զուր աղբեր Քաջանց Թագավորի աղջկա վրեն պսակեց ու Թագավոր դրեց էն էրկրի վրա, ինք լե առավ ղՕսկիծամ, դարձավ էկավ ուր տուն ու հասան ուրանց մուրատին։

Աստծուց իջավ իրեք խնձոր, մեկ ասողին, մեկ լսողին, մեկ լե անկաճ էնողին։